ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 23-Լ

«29» 01 2024 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի 1 հաստիքը նույն վարչության ավագ դատախազ 1 հաստիքով փոխարինելու, թիվ 1 կայազորի զինվորական դատախազության դատախազի 1 հաստիքը կրճատելու և Արարատի կայազորի զինվորական դատախազության դատախազի 1 հաստիք ավելացնելու, թիվ 1 կայազորի զինվորական դատախազության տեխնիկական անձնակազմի հավաքարարի 1 հաստիքը կրճատելու և զինվորական կենտրոնական դատախազության տեխնիկական անձնակազմի վարորդի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 9-րդ գլխի 31-րդ կետի «Վարչության ավագ դատախազ 3» բառերը փոխարինել «Վարչության ավագ դատախազ 4» բառերով,

2) Նույն գլխի 32-րդ կետի «Վարչության դատախազ 6» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 5» բառերով,

3) 5-րդ բաժնի 45-րդ գլխի 168-րդ կետի «Դատախազության դատախազ 2» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 1», իսկ «Ընդամենը 6» բառերը՝ «Ընդամենը 5» բառերով,

4) 43-րդ գլխի 160-րդ կետի «Դատախազության դատախազ 3» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 4», իսկ «Ընդամենը 5» բառերը՝ «Ընդամենը 6» բառերով:

5) 2-րդ հավելվածի 4-րդ բաժնի 52-րդ գլխի 205-րդ կետի «Հավաքարար 1» բառերը փոխարինել «Հավաքարար 0», «Ընդամենը 1» բառերը՝ «Ընդամենը 0» բառերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 4» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 3» բառերով,

6) 44-րդ գլխի 167-րդ կետի «Վարորդ 4» բառերը փոխարինել «Վարորդ 5», «Ընդամենը 7» բառերը՝ «Ընդամենը 8» բառերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Զինվորական կենտրոնական դատախազությունում 16» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Զինվորական կենտրոնական դատախազությունում 17» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ